«Հաստատում եմ»
ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի հենաշարժական համակարգի
խախտումներ ունեցող երեխաների հ.17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի
Տնօրեն _____ Զ. Եսայան
«___31___»____08____2022թ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ, ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Մ/Մ ՂԵԿԱՎԱՐԻ

2022-2023 ուստարվա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Սոնա Հարությունյան՝ _____

Հաստատում եմ՝ _____ Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ՝ Լ. Մանվելյան

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Ուսումնական հաստատությունում աշխատանք է տանում սովորողների ուսումնական գործընթացի և սոցիալականացման վրա ազդող անձնային խնդիրների բացահայտման հաղթահարման ուղղությամբ՝ նրանց սոցիալական օգնություն ցուցաբերելու նպատակով.
2. Ուսումնասիրում է սովորողների սոցիալական հարմարման, ինտեգրման և շրջապատի հետ հաղորդակցության դժվարությունները և իրականացնում դրանց կանխարգելմանն ու հաղթահարմանը նպաստող աշխատանքներ.
3. Բազմամասնագիտական խմբի կազմում մասնակցում է սովորողների անհատական ուսումնական պլանների մշակմանը, սոցիալական հարմարմանը նպատակաուղղված այլ ծրագրերի մշակման և դրանց իրագործման աշխատանքներին.
4. Համագործակցելով բազմամասնագիտական խմբի մյուս մասնգետների հետ՝ ուսումնասիրում է սովորողների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկությունները, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը սովորողի վրա, նրանց սոցիալական միջավայրը, շփումները, հետաքրքրությունները, հաղորդակցման դժվարությունները, սոցիալական միջավայրում հարմարման և պաշտպանվածության մակարդակը, դուրս է բերում կարիքները և դրանց համապատասխան կազմում է միջամտության պլան, որը ներառում է կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները, ժամկետները, պատասխանատուները.
5. Անհատական և խմբային խորհրդատվություն է տրամադրում սովորողներին, նրանց ծնողներին՝ սովորողների մոտ առկա սոցիալական խնդիրների լուծման նպատակով.
6. Սովորողների և նրանց ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) իրավասոցիալական շահերը պաշտպանելու նպատակով կատարում է իրավասոցիալական անհրաժեշտ գիտելիքների իրազեկում և համապատասխան խորհրդատվություն.
7. Աջակցում է ուսումնական հաստատության, ընտանիքի և պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների հետ փոխհամագործակցությանը.
8. Համագործակցում է պետական տարբեր կառույցների հետ.
9. Աշխատանքային գործունեության տարբեր ուղղությունների կազմակերպման համար կազմում է համապատասխան փաստաթղթեր և իրականացված աշխատանքների մասին ներկայացնում է հաշվետվություն ուսումնական հաստատության ղեկավարությանը:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություններ.

2. քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.

3. ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում.

4. նպաստում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը.

5. որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին (դասվարներին) նախապատրաստում է ատեստավորման.

6.կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ.

7.ուսուցիչներին (դասվարներին) հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.

8. սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն.

9. մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն.

10. կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին.

11. կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ:

ՀՀ	Աշխատանքի բովանդակություն	Կատարող	Կատարման ժամկետ	Նշումներ
1.	Դպրոց նոր ընդունվող աշակերտների փաստաթղթային փաթեթի հավաքագրում	Սոց. մանկավարժ	Սեպտեմբեր	
2.	ՏՄԱԿ-ի հետ համագործակցություն	Սոց. մանկավարժ	Տարվա ընթացքում	
3.	Դպրոցի սովորողների դիտարկում, սոցիալական հարմարմանը նպաստող աշխատանքներ	Սոց. մանկավարժ	Սեպտեմբեր	
4.	Նոր ընդունված սովորողների կյանքի պայմանների, ընտանիքի առանձնահատկությունների, փոխհարաբերությունների ազդեցության ուսումնասիրություն	Սոց. մանկավարժ	Սեպտեմբեր-հոկտեմբեր	
5.	Տնային այցելություններ	Սոց. մանկավարժ	Ըստ անհրաժեշտության	Բազմամասնագիտական թիմի անդամների մեկի ուղեկցությամբ
6.	Սովորողների սոցիալական պատմությունների կազմում	Սոց. մանկավարժ	Հոկտեմբեր	
7.	Աշխատանքային անահատական օրագրերի կազմում, ծնողների հետ հանդիպումների գրանցում	Սոց. մանկավարժ	Անհրաժեշտ ժամանակահատվածում	
8.	Վերհանված կարիքների պարագայում միջամտության պլանի	Սոց. մանկավարժ	Կարիքների բացահայտման ը զուգահեռ	

	կազմում և բուն աշխատանք			
9.	ԱՈՒՊ-ների քննարկում	Բազմամասնագի-տական թիմ	Եռամսյակը մեկ անգամ	
10.	Համագործակցություն պետական կազմակերպություն-ների և հասարակական տարբեր կառույցների հետ	Սոց. մանկավարժ	Ըստ անհրաժեշտութ-յան	
11.	Վերապատրաստումնե րի, սեմինարների մասնակցություն	Սոց. մանկավարժ	Տարվա ընթացքում	
12.	Զեկուցագեր տնօրենին	Սոց. մանկավարժ	Ըստ անհրաժեշտութ-յան	
13.	Հաշվետվությունների կազմում և ներկայացում տնօրինությանը	Սոց. մանկավարժ	Տարեվերջ	
14.	Ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկության ներկայացնում դպրոցի տնօրենին	Մեթոդմիավորման անդամներ	Ուսումնական տարվա սկիզբ	
15.	Մեթոդմիավորման անդամների հանդիպում-քննարկումներ	Մեթոդմիավորման անդամներ	Ամսեկան մեկ անգամ	
16.	Դասալսումներ	Մեթոդմիավորման անդամներ	ԿԻսամյակը մեկ անգամ	
17.	Մեթոդմիավորմների նախագահների հանդիպում-քննարկումներ	Ուսումնական գծով տնօրենի տեղակալ ՄՄ նախագահներ	Ամսեկան մեկ անգամ	
18.	Ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում	Մեթոդմիավորման անդամներ	Տարվա ընթացքում	

19.	Մեթոդմիավորման նախագծերի իրականացում	Մեթոդմիավորման անդամներ	Մշտապես	
20.	Մեթոդմիավորման անդամների աշխատանքային գրաֆիկների հստակեցում	ՄՄ նախագահ	Կիսամյակների սկզբում	
21.	Կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ	ՄՄ նախագահ	Մշտապես	
22.	Մեթոդմիավորման անդամների աշխատանքների դիտարկում, արդյունքների քննարկում	ՄՄ նախագահ	Տարվա ընթացքում	

Տեխնոլոգիայի ուսուցիչ

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում դասավանդելու եմ տեխնոլոգիա առարկան 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարաններում: Դասերն անցկացվում են սոցիալ-կենցաղային հմտությունների ձևավորման սենյակում, որը հարմարեցված, կահավորված, իրական խոհանոց է: Սենյակի հարմարեցումները երեխաներին հնարավորություն են տալիս ձևավորել ինքնուրույնություն, զարգացնել կենցաղային հմտությունները, խոհարարական տարրական հմտություններ:

5-րդ դասարանում, համաձայն նախատեսված ծրագրի, սովորողները կծանոթանան և կաշխատեն բնական նյութերով, կպատրաստեն կոմպոզիցիաներ, խճանկարներ, էքսկուրսիաներով կամրապնդեն ստացած գիտելիքները:

6-րդ դասարանում երեխաները կծանոթանան խոհանոցին, կյուրացնեն խոհանոցի դերն ու նշանակությունը, կուսումնասիրեն խոհանոցի գույքն ու էլեկտրական տեխնիկան՝ պահպանելով անվտանգության կանոնները:

7-րդ դասարանում սովորողները կծանոթանան ձավարեղենի տեսակներին, մակարոնեղենին, կաթնամթերքին, ձվին: Կաթնամթերքի և ձվի օգտագործմամբ թեթև ուտեստներ կպատրաստեն: Յուրացրածը կամրապնդեն այցելելով կաթնամթերքի գործարան:

Կսովորեն հյուրեր ընդունել, սպասքադրել, կտարբերակեն սուրճի, թեյի, ճաշի և տոնական սեղանները: